ղովուրդների մօտ իրեն ցոյց է տալիս որպէս երկրի տիրապետող իշխան և տէր։ Այդ ինքնակոչ բէկերը՝ երկրագործ խաղաղ ժողովուրդների աբիւնն ու արդար քրտնքի արդիւնքներն են ծրծում անյագ տզրուկի պէս՝ իրենց անխիղճ վաշխառութեամբ, և ապրում են թշուառ գիւղացիների հաշուով։ Այդ անզուսպ և դաժան բէկերի միակ և սովորական զբաղմունքներն են՝ ոտքից գլուխ զինուած, հեծած իրենց նժոյգ ձիու վրայ, տասնեակ ձիաւոր ծառաներով գիւղէ գիւղ թափառել, հին տոկոսները հաւաքել և կամ բարդել մայր գումարի վրայ և ապա պարտամուրհակները փոխել և դրել իւր ուղածի պէս. այս ու այն գիւղացիներին ստիպել, որ իրենց համար վառեակը տակը դրուած ընտիր փլաւ և այլ համադամ խորտիկներ պատրաստեն և իրենց ձիերին առատ գարի ու դարման տան։ Այս ամենը ձրիաբար տալուց զատ, թշուառ գիւղացիք բէկի ամեն մի ռուբլուն տոկոս են վճարում ամսական 20—30 և երբեմն 40 կոպ.։ Ցայտնի բան է՝ կալուածատէր բէկերի հողերի վրայ ցան անող գիւղացիք չարչարում, տանջւում են իրենց մարդկանցով և անասուններով և ապա բէկին հասանելի հացահատիկներն ու դարմանը և խոտը մաքրած, պատրաստի տանում և լցնում են նրա ամբարը։ Բէկերի սիրած պարապմունքներից մինն էլ որսորդութիւնն է, որ գեղեցիկ բազէները թառած իրենց մի թաթի վրայ, ընտիր երիվարի վրայ հեծած, իրենց ծառաներով և որսորդական շներով սա-